

Ն. ՏԻԽՈՆՈՎ

ՌԵՎԵ

891.715
S-58

ՊԵՏՏՐԱՏ



30 MAY 2011

Ձ 15182

891.710

Ց-58.

Ն. ՏԻՒՈՆՈՎ

Դ Ե Վ Ը


Նկարներ՝ Գ. ՆԻԿՈԼՍԿՈՒ
Թարգմ. Ս. ՈՀԱՆՅԱՆ

Նկարներ
Գ. Ն. Ն. Ն. Ն.


Պ Ե Տ Տ Ր Ա Տ

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ ՑԵՐԵՎԱՆ 1938





34198-62



I

Այն ժամանակ դեռ շարունակվում եր կռիվը գերմանացիների հետ: Հեծելազորի համար ձիերի շատ կարիք կար՛նե ան հավաքում ելին ամեն տեղից — գնում ելին գյուղացիներից, տոնավաճառում, վերցնում ելին առանց վճարելու, բերում ելին հեռուներից, տափաստաններից՝ բաշկիրներից ու թուրքեստանցիներից:

Մի անգամ գունդը բերեցին նոր ձիեր, կանգնեցրին հրապարակում բաշխելու համար, վորը վոր կողմ: Սպիտակները գնում ելին դրագուններին, սևերն ու դեղնագույնները՝ հուսարներին, մոխրագույնները՝ սահմանապահներին, իսկ բժավորներն ու վոչ գունավոր ձիերը — գունակին՝ յերկանիվներ քաշելու ու բեռներ կրելու համար: Հրապարակն լեկավ մի հաստ սպա, պճնված, վոսկի մաախը ձեռքին, վորպեսզի կարգադրի:

Յեկավ նաև դեմքը պզուկներով պատած գրազիրն աթուր ձեռքին, վորպեսզի արձանագրի ու դասավորի թղթերը:

Սկսեցին ձիերը քաշել նրանց մոտով:

Յուրաքանչյուր ձիուն տանում եր մի նորակոչիկ՝
Ձիերը դողում ելին. վոմանք հետաքրքրութուից, վո-
մանք վախենալուց, վոմանք ել ուղղակի շարուխյուսներից՝
Դողում ելին նաև նորակոչիկները. առաջին անգամ ձի-
երին տանում ելին հրամանատարության առջևից:

Կանգնեցնում են ձին սպալի առջև ու հրամայում
ձիուն. — «զգաստ»: Իսկ սպան նույնիսկ չի նայում: Նա
ձեռքով նշան է անում — «հաջորդը» և սպասում:

Իսկ գրագրի բանը շատ դժվար է. նա պետք է ան-
միջապես գրի՝ ուր է գնում ձին և հենց այդտեղ հնարի
նրա անունը: Ձիերի թիվը քիչ չէ. ամեն խմբում հար-
յուրից ավելի և բոլոր անունները պետք է սկսվեն «չ»
տառով:

Այդպիսի կարգ եր սահմանված. հին կադրային ձիերի
անունները պետք է սկսվեն «ա» տառով, պահեստային
ձիերը «ո» տառով, իսկ նորերը, շահելները «չ» տառով:

Գրագրի համար դժբախտություն եր. Նրա գլխում
«չ»-ով սկսվող լերեք բառ անգամ չկար: Գրա համար նա իր
հետ ման եր ամում մի հին, քրքրված բառարան: Բաց
եր անում և հաջորդաբար ընտրում Չելյաբինսկի, Չուրբան,
Չիրի, Չեմպին, Չեչոտկա...

Ձիերին տանում են արագ — միայն թե կարող էս
հասցրու անունները. իսկ ձիուն թքած, թե ինչ կանվա-
նես նրան: Նրանք խենթորեն նայում ելին, խլշում ականջ-
ները, փնչացնում ունգերով ու շատ ել դժգոհ ելին,
վոր իրենց հետ ու առաջ են տանում:

Գրագիրը բոլորովին շոգեխաշ եր յեղել: Գլխարկը
ծովել եր դեպի կողքը, քրտինքը սրբելու ժամանակ չկար.
մատիտի ծայրը կտարել եր, փոխարինողը չի գալիս: Հենց
այդ ժամանակ մոտեցնում են մի հրաշալի նսույգ:

Նժույզն ամբողջովին սպիտակ է. մազերը փայլուն,

ականջները կանգնած, աչքերը թուխ, քայլվածքը խրոխա-
յեբախակալը կրծում է ու բաշը թափահարում:

Նայեց գրագիրը բառարանին ու ավելի քրտնեց:
Չգիտես ով, վերցրել ու կտրել եր բառարանից տառ թերթ:
«Չ» — ով սկսվող վոչ մի բառ այլևս չկա: Այն կողմն ար-
դեն «չ» տառն է գալիս. ի՞նչ անել:

Իսկ նժույզը տեղում չի կանգնում. թափահարում է
նորակոչիկին չորս կողմը: Գրագիրն այլայլվեց, սպան նա-
յում է նրան զայրացած հայացքով — ինչո՞ւ չե ուշանում.
գրագիրը շտապում է, մտածում, վերհիշում, բաց նոր
անուններ գլուխը չեն գալիս:

Սպասեց, սպասեց նժույզը, հանկարծ պոկվեց գինվորի
ձեռքից, հեակի վոտներով խփեց գրագրի աթոռին, թըղ-
թերը ցիր ու ցան յեղան: Մոտ վազեցին հին գինվորները,
բռնեցին նժույզին. նա շարունակում եր կատաղել:

— Այ քեզ Չորտ (Դև), բացականչեց գրագիրը և շարու-
թյունից վերցրեց ու նժույզի անունը դրեց «Չորտ» — «Դև»:

Այդ որվանից մինչև չուր ռազմական ծառայության
վերջը — նժույզը կոչվեց այդ անունով:

II

Հաջորդ որը նորակոչիկները մտան գոմը: Նորակո-
չիկները ծառայությունը չգիտեն, ձիերն ել չգիտեն,
ինչ են ուզում նրանցից: Մարդիկ վախենում են ձիերից.
նրանցից վոմանք միայն կառապանների մոտ են ձի տե-
սել. ձիերը խրտնում են մարդկանցից, քացի լեն տալիս:

Նորակոչիկները սկսեցին թամբել նրանց: Ով վա-
զորոք դիտել եր թե վոր ձին է հանգիստ, այժմ նրա մոտ
եր վազում. իսկ ամենից կատաղիները հենց այդ համեստ
յերևացողներն ելին:

Դևին մոտենալ ամենևին չհաջողվեց:

Յեւ մեկ կողքից և մյուս կողքից նրան մոտեցավ զինվորը. թամբը ձեռքին, բայց չկարողացավ նրան թամբել:

Լաց լեղավ նորակոչիկը հուզմունքից ու բարկություններից. բայց այդտեղ նրա վիշտը նկատեց հին դրագունը: Նա ձայն տվեց մի քանի մարդկանց ևս ու հինգ հոգով մի կերպ թամբեցին Դեին: Մեկը գլուխն եր բռնել, մյուսը պոչը, մեկը մի վտարը, մի ուրիշը մյուս վտարը, իսկ հինգերորդը թամբն եր քաշել մեջքին:

Հենց վոր նորակոչիկը Դեին գոմից հանեց, հին դրագունը նայեց հետևից ու ասաց.

— Յերթասարդ, դու կկործանվես դրա հետ...

Դեը դուրս լեկավ դաշտը: Հրաշալի լե շուրջը, կանաչ, քամիները շատ: Մտավ նա շարքերի մեջ, կարգը չեր խախտում:

Վախմիստորը—այդ հին գորանոցային մուկը—հրամայեց հեծնել: Նորակոչիկները հեծան ձիերը: Իսկ ձիերը վոչ կանգնել զիտեն, վոչ զինվորական ձևի շարվել: Դեն ել գնաց դեպի դաշտ, նախ քայլեց կողքի վրա, ապա պտտվեց, թեքվեց մի կողմ ու սլացավ, առաջ անցնելով բոլորին. միայն բարձրացող փոշին եր լերևում:

Նորակոչիկը կառչել եր թամբին և վախից վոչինչ չեր հասկանում: Վախմիստորը հետևից բղավում եր.

— Վտարերդ հանիր ասպանդակներից, հանիր վտարերդ, անպետք արարած, դաշից մի բռնիր—ավելի լավ եքեզ ցած գցիր, չհամարձակվես դաշից բռնել—կսպանեն...

Նորակոչիկը վոչինչ չի լսում: Քամին սուլում ե ականջներին, իսկ Դեը տանում ե նրան՝ անհայտ ե թե ուր: Սլացավ, սլացավ, հանկարծ կանգ առավ, կարծես տնկվեց հողի մեջ զինվորը գլխի վրա, ինչպես նապաստակը, ընկավ ցած ու թավալվոր լեղավ դաշտում:

— Ե՛խ, բողկ ես քանդում անպետք քոստ, — գոռաց



վախմիտորը, — Բնչ ես նստել, գնա, ձիուն բռնիր. հի վեաք ե քեզ համար ձին բռնի:

Դեր խաղաղ արածում եր, պոճոկում եր խոտը. շատ բավական եր իրենից: Զինվորը կաղալով մոտեցավ նրան, լերկարեց ձեռքը — Դեր ցատկեց մի սաժենի չափ և սկըսեց նորից խոտը պոկոտել:

Չորս բուրրը բրբջում են: Զինվորը նորից մոտեցավ Դեին: Դեր դարձյալ թռավ մի կողմ:

— Այդ Բնչ ե, դու բռնուկ ես խաղում, — գոչեց վախմիտորը. — տալ նրան լերեք «նարյադ» (վերակարգ):

Ցատկեց զինվորը վերջին անգամ. բռնեց լերասանակից, ուզեց նստել ձին չի թողնում: Զինվորը վոտքը դրեց ասպանդակին, ձին բռնեց նրա վոտքից: Նորից լաց լեզավ նորակոչիկը կսկծից ու հուզմունքից, բայց պարապմունքը վերջացավ ու ձիերին տարան գոմ:

III

Ամեն որ նորակոչիկները հեծյալ պարապմունքի լեն դուրս գալիս և ամեն որ Դեի ղեա տազնապ ե: Վոչ վոքի չի ուզում լենթարկվել և ուրիշ վոչինչ: Այնպիսի խորամանկություն կբանեցնի, վոր միանգամից չես զուշակի թե բանն ինչումն ե: Թույլ ե տալիս թամբը դնել, թամբակալն ամրացնել. նորակոչիկն ուրախ ե: Դուրս են գալիս դաշտ, հենց զինվորը մի վոտքը դնում ե ասպանդակին, թամբի հետ կախվում ե Դեի փորի տակ, Դեր վոտքով գարկում ե զինվորին և փախչում հեռուն: Ինչումն ե բանը: Պարզվում ե, վոր այն ժամանակ, չերթ թամբը սարքում են մեջքին, նա ուոցնում ե իր փորը գնդակի պես ու այդպես ել կապում են փորաքաշն ու թամբակալը. իսկ չերթ ցանկանում են հեծնել մեջքին, փորը թուլացնում ե, թամբը խաղում ե մեջքին ու գլորվում փորի տակ:

Նորակոչիկների մեջ կար մի ձիավարժության աշա-



կերտ: Նա ամուր եր ու համառ ինչպես ձին: Անունը Կորմյակ էր:

Հեծավ Դեին, մի պտուտ արավ, չերկրորդը, — կարծես վոչինչ: Յնցեց նրան Դեը, թափահարեց մեջքը, տեսավ չե, տղան պահվում է: Այն ժամանակ նա թափ առավ, առաջ պոկվեց, կծեց հարևանի պոչից վերև, այս հովատակն իր հերթին մյուսին կծեց, վերջինս հաջորդին ու մի պահ՝ հովատակները կծոտում ելին իրար, վոտքով խփում, խրխնջում, կռվում:

Մի աջափսի աղմուկ բարձրացավ, վոր վախմխտորն էլ սկսեց աղաղակել:

— Սա ի՞նչ բազար է. միմյանցից յերկու ձիաչափ տարածություն պահեք, գորշ սատանաներ:

Իսկ Դեը կրծոտեց սանձի բերանոցը և տարավ ձիավարժ Կորմյակին: Գաշ տվավ, քաշքշեց նրան Դեը, հետո շրջվեց, ցատկեց սուվի վրայով ու մտավ ճանապարհը: Ճանապարհի կողմերին ցածր ծառեր ելին տնկված: Կորմյակը վախեցավ, վոր ճյուղերը գլուխը կպոկեն, թեքվեց կողքի վրա. հենց այդ կողքով Դեը խփեց ծառին. Կորմյակն ընկավ սուվի մեջ, իսկ նժույգի հետքն անգամ չեր չերևում:

Դեպի գորանոց արշավում եր Դեը փրփրած, չար ու սարսափելի. նա մոտենում եր գոմին: Գոմի դռները բացված էին, իսկ դռան լայնությամբ մետաղյա ձող եր գրցված: Նա կծկվեց, կռացավ, կորացրեց մեջքն ու մտավ ներս. թամբը սեղմվեց չերկաթե ձողին ու ամբողջովին ջարդվեց: Ուղիղ գնաց դեպի իր հաստոցը, կանգնեց, սկսեց ծանր փնչացնել ու հանգստանալ: Այդ որվանից նրանից սկսեցին սարսել բոլոր նորակոչիկները: Գոմը մտավ վախմխտորը, նայեց նրան ու ասաց.

— Բռնավոր դու ավագակ: Հանձնեցեք նրան հին դրագուններին, թող ջարդոտեն...

Չորս ամսվա ընթացքում վոչինչ չսովորեց Դեը. վոչ քայլ, վոչ քառատրոփ, վոչ թեթև վազք և վոչ սրարշավ: Վորևե կերպ չկարողացավ տարբերել՝ վորտեղ է ձախ վոտքը, վորն է աջ վոտքը: Նրան հանձնեցին հին դրագուններին:

Հին դրագունները — դրանք բանիմաց ժողովուրդ ելին, սակայն հոգնած ու վոչ ուժեղ: Այնքան ձիեր ելին փորձել, վոր ձանձրացել ելին: Նրանց ավելի լավ կլինեք տուն ուղարկելին. հող կվարեյին, կնստեյին ջրաղացում, կամ արհեստով կզբաղվեյին. իսկ այստեղ՝ բարեհաճեցեք անվերջ ձի քշել: Նրանց վոսկորները տնքում ելին, բայց ելի ստիպված ելին ձի հեծնել:

Հրամայում են՝ «Հետևակ շարքի պատրաստ — իջնել»: Պետք է քառատրոփ արշավի ժամանակ թամբից թռչել գետին:

Թուար գետին — անմիջապես նոր հրահանգ՝ «հեծնել»: Հեծան — նորից իջնել, իջան՝ նորից հեծնել. ուղղակի անիծված...

Հրամանատարն եր՝ խցանի նման, սարդի պես փոքր, չար հեծելավաշտապետ Ռյազանցեվը: Ճշում եր կանացի բարակ ձայնով.

— Դրագուններ, լսել իմ հրամանը:

Դրագունները լսում ելին ու հայհոյում նրան վերջին խոսքերով:

Դեը գնացել եր չարածձիություն անելու հեծելագործի վաշտապետի աչքի առաջ: Բայց հին զինվորը ջարդել եր նրա կողերը խթաններով ու այնպես եր բռնել յերախակալը, վոր ել ազատվելու հնար չկար: Իսկ բարյերի (ցանկապատի) վրայով պետք եր թռչել, Դեը համառեց ու այլևս վորևե խթան չեր ոգնում: Մեխվել եր ու կանգնել: Դրագունը հարվածում է կոշկախթաններով, արյունը հոսում է փորի

վրայից, հետևից խփում են, կողքից խփում են—Դեք չի շարժվում: Այն ժամանակ դրագունը խփեց լերկու ախանջները մեջտեղը: Վերափորական է հին գինվորի համար, վոր նա չգիտեր Դեկ բնավորութունը: Դեք հարվածի ցավից ձչաց, ծառս լեզավ, ամբողջ հաստիով կանգնեց յետևի վտաքերի վրա և մեջքի վրա ընկավ գինվորի հետ միասին:

Յեթե դրագունը չհասցներ վտաքն անմիջապես ասպանդակից հանելը—ապա ամբողջ կյանքում կմնար հաշմանդամ: Ընկավ դրագունը—ձին նրա վրա: Ջարդված ու մամլված գինվորին հագլիվ բարձրացրին: Իսկ Դեք կանգնեց, վրնջում է, հպարտանում, փնջացնում և այնպես է նայում, կարծես ասում է՝ «չախտի ծառայեմ, ում ուզում եք նստեցրեք»...

Մոտեցավ վաշտապետը, նայեց նրա աչքերին և ցանկանում էր մտրակով խփել, բայց Դեք մերկացրեց ատամներն ու կրճատացրեց:

Վախեցավ վաշտապետը, դարձավ ու հրամայեց.

- Բանտ նստեցնել տաս որով:
 - Ինչո՞ւ համար եք ինձ բանտ... — բացականչեց դրագունը:
 - Քեզ չե, ձիուն:
 - Ինչպես հրամայեցի՞ք, — հարցրեց շոկապետը, — սա չեզակի գեպը է. ձիուն բանտ:
 - Այսինքն տաս որ նստեցնել կերի կես նորմայի վրա: Ինչպես է դրա անունը:
 - Դե
 - Յերևում է: Հեռացրեք դրան...
- Յեվ այդպես Դեք հին գինվորների հետ ել յուր չգնաց ու կալանավոր դարձավ:

V

Հենց վոր Դեք նստեց կես բաժնի վրա, վերջնականապես կատաղեց: Վոչ վորի տեսնել չեր ուզում, վոչ մեկին մոտիկ չեր թողնում:

Որսպահը մաքրում էր գոմը, հենց մտաենում էր նրա հաստոցին աղբը հանելու համար, այնպես էր արացի տալիս, վոր նա լերկրորդ անգամ մոտ գալու մասին չեր ել մտածում:

Ձիերի առանձին հաստոցները միմյանցից անջատված էյին տախտակե պատերով: Դեք լերկու կողմի փայտերը ջարդ ու փշուր արեց: Հավաքեցին տախտակների կտորներն ու տարան:

Դեք սկզբում հաճոյանում էր իր հարևան ձիերով, ապա վիճեց նրանց հետ, հետո կովեց, չկար մի որ, վոր չբողոքեյին Դեից: Բսլորը գիտեյին վոր լավ նժույգ է, սակայն վոչ մեկին չի հպատակվում: Մյուս վաշտերից գինվորները գալիս էյին նայելու նրան, վորպես մի արտասովոր կենդանու: Նրա մոտ յեկան նաև ձիամարզիչները, բայց նա այնպես էր վտանահարում ու աղաղակում, այնպես էյին արնակալում նրա աչքերը, վոր նրան վարժեցնել վոչ-վոք չհամաձայնվեց:

— Մինչև դու նրան կխրատես, նա քեզ լերեք անգամ կվոչնչացնի, — ասում էյին փորձված ձիավարները. — վայրենի յե, ծառայել չի ուզում:

Իսկ ձիավարները ձիու գործում առաջինն էյին գնդում: Վոչ մեկը նրանցից լավ ձի հեծնել չեր կարող: Նրանք կարող էյին արշավել և կանգնած և պառկած և ձեռքերի վրա:

Յերը ձիավարներն ել հրաժարվեցին Դեից, նորակոչիկները սկսեցին նրան զրգուել ու գայրացնել: Նժույգին այն աստիճան գայրացրին, վոր նա այլևս չեր կարողանում տանել մարդու ներկայութունը: Իր մոտ վոչ մեկին չեր թողնում: Բավական էր միայն հեռվից թափահարել թաշկինակը. անմիջապես խփում էր յետևի վտաքերով այն դարակներին, վորտեղ դարսված են թամբերը: Գցում է թամբը, մեկ-լերկու անգամ նորից խփում նրանց ու հանգրստանում:

Իր սովորութիւնները համար տեղափոխեցին հարե-
վանին, միացրին յերկու հաստոցներն ու կապեցին յերկու
շղթայով, վորպէսզի այլևս բաց չընկնի: Դեր բոլորովին գա-
զագեց:

Մի անգամ յեկավ անասնաբուժը, դիտեց գոմը, նախա-
տեց, հայնոյեց, հազաց. աչքն ընկավ Դեին:

Կողքից ստուգեց. բացահայտ խոցեր չկան, տեսքն
ստորջ է, — «Ինչո՞ւ աշխատանքի չե՞ս»:

— Նրա բնավորութիւնն ու գլխի մեջ ամեն ինչ կար-
գին չե՞ս, — պատասխանեց որապահը:

— Սա ի՞նչ ցնդաբանութիւնն է, — նկատեց բժիշկը:

— Ճիշտ է, պարոն բժիշկ. այս նժույգը մեզ վրա նե-
ղացել է: Մեզ հետ ապրել չի ուզում: Ուղղակի խելագար է...

Ձեռնատաց անասնաբուժը և ցանկացավ մտնել Դեի
մոտ: Դեր հանկարծ յերկու յետևի վտարելով վեր խփեց,
հենց բժիշկի գլխի մոտ զընկացին թամբերի յերկաթները,
բժիշկը գունատվեց, հայնոյեց ու դուրս գնաց:

Ամեն շաբաթ որը դրագունները սպիտակ ձիերին հա-
նում էին բախն ու մաքրում ոճառով, այնքան փութա-
շան ու շատ, վոր նրանք սպիտակին ելին տալիս: Հետո,
վորպէսզի մազերը փայլելին, շփում էին չոր ածուխով և
նրանք պսպղում էին:

Միայն Դեն էր մնում գոմում ու սեփական բավակա-
նութիւնը համար ժամանակ — առժամանակ խրխնջում էր:

Խրխնջում է, լսում իր ձայնը. — լավ է դուրս գալիս. նո-
րից է խրխնջում: Մեջքին ցախավելով խփում են — հանգստա-
նում է:

Մաքրում էին նրան յուր տեղում, քիչ կեր էին տա-
լիս. միայն հետևում էին, վորպէսզի շղթաներն ամուր
մնան:

Հայտնի չէ, թե ինչքան ժամանակ նա կմնար յուր
բանտում, յերբ հանկարծ լուր տարածվեց, վոր ինքը — բրի-
գազայի հրամանատարը պետք է նայի գոմերը:



Այստեղ ել Դեռ բախտ ունեցավ վողջունել բրիգադի հրամանատարին յուրատեսակ ձևով:

VI

Դրագունները շատ ելին սիրում իրենց բրիգադայի հրամանատարին: Այնքան ելին սիրում, վոր յերբ փողոցում նկատում ելին նրան, անմիջապես թռչում ելին ցանկապատով, վորպեսզի նրա աչքին չերևան: Նա կազում եր ձախ վոտքից, ուստի ձի հեծնել բոլորովին չեք կարողանում: Մտնում ե գոմը կաղալով, ֆշապնում, ծղրտում զինվորներին ու ձիերի վրա: Լուում են ձիերը, լուում են զինվորները, լուում են պատերը: Մտեցավ Դեհն, կանգնեց:

Նրան զարմացրեց այն, վոր ձին յերկու շղթայով ե կապված:

— Սա ի՞նչ անկարգությունն է, — գոռաց նա վաշտապետի վրա:

Դեռ հենց լսեց գոռոցը, դարձավ և այնպես աղաղակեց գեներալի վրա, վոր նրա ականջները խլացան:

Այն ժամանակ կող գեներալը բղավեց Դեհի վրա.

— Հանդարտ, զգաստ. նայիր ում վրա յես գոռում... Գեներալ ե դիմացդ կանգնած:

Յեվ Դեռ նորից գոռաց: Ու այդպես, ամբողջ յերկու րոպե դիմաց առ դիմաց կանգնած, միմյանց վրա գոռոցում ելին Դեհն ու գեներալը:

Գեներալը ծանր հետում եր. ձին լուեց:

— Սա ի՞նչ անկարգությունն է, պարոն վաշտապետ, — այս անգամ հանդիստ ձայնով հարցրեց գեներալը:

— Սա ի՞նչ կարգ է, վախճիստ, — դարձավ նա վախճիստին:

— Սա առանձնակի ձի յե, ձերդ գերազանցություն, — պատասխանում ե վախճիստը, — հեծնել նրան չի կարելի. կարող ե մարդ սպանել. վոչ վոքի մտքը չի թողնում, մյուս ձիերին հաշմանգամ ե դարձնում...

— Ինչպե՞ս են նրան կերակրում:

— Կտուրից — ձերդ գերազանցություն:

— Ինչպե՞ս թե կտուրից:

— Բարձրանում են դիմացի պատը, վարսակը վերեվից թափում ախոռի մեջ, խոտը նետում առջևը, իսկ շուրջ դույլով վերեկից թռկով իջեցնում...

— Սա ի՞նչ ցնդաբանությունն է, — գայրացավ գեներալը: — Իսկ ի՞նչպես են մաքրում:

— Մաքրում են ավելով, — ձերդ գերազանցություն:

— Ի՞նչպես թե ավելով...

— Հեռվից վրայի կեղտերը մի կերպ մաքրում են ավելով, բայց նա ավելը կծոտում ե ու քաշում: Քանի — քանի ավելներ ե փչացրել սա — հաշիվ չկա: Իսկ յեթե չմաքրեյին, նրա կաշին կչորանար կեղտից, իր անտաշության պատճառով: Շատ համառ ե: Ծառայել չի ուզում:

— Ձի կարող պատահի, — փրփրեց գեներալը, — ինչպես թե չի ուզում ծառայել... Յես նրան ցույց կտամ...

Նա կատաղությունից նույնիսկ շառագունեց և ուղիղ, ինչպես պահանջվում ե կանոնագրքով, մտավ հաստոցն ու կանգնեց Դեհի գնչի առաջ:

Բոլորն ահից քարացան: Գեներալն սկսեց շոյել նրա դունչը. Դեռ լուռ ու հանդիստ եր: Վաղուց նրա մոտ վոչ վոք չեք մտել, ուստի նա չգիտեր ել թե ինքն ինչ պիտի անի:

Բոլորը կանգնել ու նայում են. ինչո՞վ կվերջանա...

Գեներալը նայեց չորս բոլորը հաղթական ձևով ու ձեռքը տարավ դեպի ձիու բաշը: Հենց նոր եր ձեռքը կպել վզին, Դեռ հիշեց իրեն հասցրած հին վերավորանքները, հանկարծակի թափահարեց գլուխն ու իր մարմնի յերկայնքով փակեց հաստոցի մուտքը — գեներալին թողնելով ախոռի մոտ: Գեներալը չկարողացավ շարժվել, կամ դուրս գալ: Փակեց նրան Դեհն իր հսկայական կերպարանքով:

34198-62



Կանգնել ե գեներալն ախոռին կզած — սպրդնած: Ձեռքը տարավ դեպի ծոծրակը և չգիտի՝ թե ի՞նչ անի:

Ձինվորները յերեսը մի կողմ են շրջում ու փոթկացնում: Լնվ ծուղակ եր ընկել գեներալը: Նժույզը հանգիստ կանգնած ե, իսկ նա անհանգիստ շփում ե վիզը: Կանգնել են լուռ միմյանց դիմաց: Հիմար դրուժյուն:

Հենց փորձեց գեներալը դուրս գալ, նժույզը քայլեց նրա վրա և նորից սեղմեց ախոռին: Գեներալն արդեն դժվար եր շնչում, ամբողջովին քրտնել եր, հուզմունքից լացը գալիս եր. բայց միևնույն ե, վոչինչ չես անի:

Յեկ վոչ վոք չգիտեր՝ ի՞նչպես փրկել նրան:

Պատը կեղտոտել եր գեներալի մեջքը. նա գրպանից հանեց թաշկինակը քրտինքը սրբելու համար, յերբ վախմիստըրը գոռաց.

— Ձերդ գերագանցություն, մի հանեք թաշկինակը. տեսեք, ձեր առողջության համար պատասխանատու չեմ:

Բոլորը գիտեյին, վոր բավական ե գեներալը հաներ սպիտակ թաշկինակն ու թափահարեր— ձին նրան մահ կբերեր: Կարորեր գեներալին— թաշկինակի հետ միասին:

Գեներալը բոլորովին այլալվեց. քրտինքը հոսում ե վրայից. այժմ արդեն ձեռքն անգամ շարժել չի համարձակվում: Իսկ նժույզն ուրախ ե: Նայում ե գեներալին, մի քիչ կողմ ե քաշվում, խաբում նրան, ապա վրա քշում և հրում... Գեներալի մեջքը կապտել եր:

Այդ տեսարանը յերբեք ել չեր վերջանա, յեթե վախմիստըրը չկանչեր մի գինվորի ու շոկով ասեր ախանջին.

— Գնա վարսակ բեր ու ախոռը լցրու մյուս կողմից:

Խորամանկ եր վախմիստըրը— գորանոցային այդ հին մուկը:

Ձինվորը բարձրացել եր մյուս պատը, թափում եր վարսակը. չափոցը կպավ ախոռին. Իեր նայեց այն կողմը, սա ի՞նչ նորություն ե. որվա այդ պահին նրան յերբեք չեն

կերակրել, մանավանդ այսքան շատ վարսակով: Ձգվեց, աւանդերով հոտոտեց, — խո չե՞ն խաբում:

Ձե, խաբեբաշուժյուն չե. իսկական վարսակ ե: Շարժվեց նա դեպի այն կողմը, վրա ընկավ վարսակին ու հենց վոր դունչը խոթեց վարսակի մեջ, գեներալը գլորվելով դուրս պրծավ հաստոցից. կարծես թրջված ալյուրի պարկ լիներ. հազիվ կանգնում եր վոտքերի վրա: Յուլց տվավ Դեին ու ձեռքը թափահարելով ասաց.

— Վաճառել անմիջապես այս անասունին. թող կորչի սատանաների մոտ, վորպեսզի հետքն անգամ չերևա...

Վախմիստըրը մի գինվոր ուղարկեց Դեի համար գնորդ գտնելու: Հենց վոր գինվորներն իմացան, վոր հիմա գալու յեն Դեին գնելու համար — խոնված ներս թափվեցին գոմը:

Յեկավ և գնորդը — փոքր, վտիտ մի թաթար. միբուրն ասես թաղիքից լիներ, վերարկուն ճարպոտված. ձեռքերը շատ փոքր եյին, բայց աչքերը խոշոր՝ թուչունի նման:

Թաթարը նայեց ձիերին ու գովեց.

— Լավ ձի յե, սյ, շատ լավ ձի յե...

Տարան նրան Դեի մոտ ու հետ քաշվեցին:

Վախմիստըրը ներս մտավ, նայեց գնորդին ու հեգնեց.

— Իու մենակ ես յեկել. իսկ ո՞ւր են քո ողնականները: Կկործանվես դու սրա ձեռքին. սա ձի չե, այլ դե, սատանա: Նայիր, քանի շղթայի տակ ենք պահում:

Թաթարը խորամանկ ծիծաղեց ու շփեց ձեռքերը:

— Ինչո՞ւ. Դեը լավ ձի յե, ինչո՞ւ յեք վաճառում:

Նա շրջեց ձիու չորս կողմը, ուշադրությամբ նայեց շղթաներին, վորոնցով կապոտել եյին նրան ու ասաց.

— Թամըր ինչո՞ւ համար ե: Ինչո՞ւ յեք նեղացնում ձիու: Մենք նրան լավ տիրոջ կվաճառենք: Նա կաշխատի: Նայիր, ինդրեմ:

Թաթարը հանգիստ մտավ հաստոցը, հանեց Դեի վրայից շղթաներն ու գրպանից հանեց մի կտոր թուկ: Ձինվորները լուռ, շունչ պահած նայում եյին: Դեը տեսավ թուկը,

Թափահարեց գլուխը, ցատկեց պատի մոտ ու սկսեց քորել
կողերը պատին քսելով: Թաթարը հագցրեց նրա վզին ող
արած թուկը, հանգույցով ամրացրեց ու քաշեց նրան դեպի
գոմի մուտքը: Ամբոխը սարսուցեց: Մեկը նույնիսկ հանդգնեց
թաշկինակ թափահարել: Դեռ նույնիսկ գլուխը չբարձրաց-
րեց:

Թաթարը նրան դուրս հանեց բակը և միայն այստեղ
Դեռ կատարեց առաջին արագ շարժումը. նա ձգվեց դեպի
կանաչ խոտը, վորը վաղուց չէր տեսել: Յե՛վ լերբ թաթարը
նրան դուրս եր հանում դարպասներին, Դե՛ի բերանից կախ-
եյին ընկել մի քանի կանաչ խոտեր:

Պատ. խմբագիր՝ Վ. Ղազանջյան
Լեզվ. խմբագիր՝ Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Մրբագրել՝ Ա. Արզաբանյան
Կոնտրոլ սրբագրել՝ Մ. Մարտիրոսյան



Գլավիտի լիագոր՝ Ղ—4708. Հրատ. № 4398.

Պատվեր 28. Տիրաժ 5000.

Թուղթ 62×94 Տպագրական 11/4 մամ.

Մեկ մամ 24 480 նշան. Հղինակ 1/3 մամ.

Հանձնված է արտադրության 2 հունվարի, 1938 թ.

Ստորագրված է տպագրության 28 մարտի, 1938 թ.

ԳինԸ 50 Կ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0390726

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

5304

Ն. ТИХОНОВ
Ч О Р Т
ГІЗ АՐՄ. ՏՏՐ, ԵՐԵՎԱՆ